

Ս. ՍԻԼՈՒԻԱՅԻ ԿԱՄ ԼԱՍ ԵՒՍ ԵԹԵՐԻԱՅԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի Ս. ՏԵՂԻՍ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ԹԱՐԳՄԱՆՁԷՆ



Charles Lebrun - 'Կալիս Գեղար. Ֆ. Տիւրանլուի' Միլիթ. վանքին

Երբ ամբողջ աշխարհի քրիստոնեայ հաւատացեալները բարեպաշտութեամբ կը տօնեն Քրիստոսի փրկագործ չարչարանքին, խաչելութեան եւ մահուան ժԹ դարադարձը, եւ այնքան ուխտաւորներ խունկ եւ համբոյր կը տանին Յիսուսի Ս. Գերեզմանին, կը համարինք որ ի դէպ եւ օգտակար ըլլայ այս նուիրական էջերուն մէջ խառնել քրիստոնէութեան նախկին դարերէն մեզի հասած պատմական ու բարեպաշտական յիշատակարան մը, ուր Ակուիտանացի ազնուական ու սրբասուն տիկինը Սիլուիա, Հին եւ Նոր Կտակարանը ձեռքին՝ կ'այցելէ սրբազան վայրերը՝ հաւատաւորի մը խորին հաւատքով եւ բարեպաշտութեամբ:

«Ուխտագնացութիւն ի Ս. տեղիս»ը ուրեմն Սիլուիայի գործն է, զոր գտաւ Կալիստոսի մոլորիկը՝ Արեւմտեայ մատենադարանի ձեռագիրներուն մէջ 1884ին: Թէեւ Կտրատուած ու պակասաւոր, սակայն մեծարժէք է քրիստոնէական հինաւուրց դարերու հաւատքին, կեանքին ու գործին մասին տուած տեղեկութիւններուն համար: Ընդհանուր այս տեւապահութեան զատ մեզի համար յատուկ հետաքրքրութիւն մը կ'արթնցնէ անով որ՝ Սիլուիա էջեր ունի Եղեսիայի վրայ, Թովմաս առաքեալի գերեզմանին, յետոյ յիշեալ քաղաքի եպիսկոպոսին եւ անկէ լսած հնաւանդ Աբգարեան զրոյցին: Բայց կանխենք ըսելու որ հայ-քրիստոնէական բաժինը Թարգմանուած եւ հրատարակուած է մեր հայրերէն, համառօտ ծանօթութիւններով. (տե՛ս «Բազմավէպ» 1889, էջ 138-143):

Ներկայ բացառիկ թուին մէջ չկարենալով զայն ամբողջապէս զետեղել, պարբերաբար պիտի տանք: Միայն, նկատելով յատուկ պարագան ուխտական եւ սուրբ տարւոյն՝ այս անգամ պիտի տանք այն մասը որ յատկապէս Երուսաղէմի տնօրինական տեղերուն վրայ կը խօսի: Եւ այս առթիւ հարկ կը համարինք համառօտ տեղեկութիւններ զետեղել հոս թէ՛ սրբուհի հեղինակին կեանքին եւ թէ՛ իր գործին բովանդակութեան եւ նկարագրին, ինչպէս նաեւ ծանօթութիւններ մը՝ Թարգմանութեան վերջը՝ լուսաբանելու համար միջին բառեր կամ ասութիւններ, որոնց ստեպ պիտի հանդիպի յարգելի ընթերցողը. եւ այս՝ զարմանալի չէ. նախ լեզուի տեսակէտէն՝ որ եզական է. եւ յետոյ դարէն եւ նիւթէն, քանի որ Եկեղեցւոյ նախկին շրջանի ձեւերէն եւ սովորութիւններէն շատ բան փոխուած է այսօր: —

Ս. ՍԻԼՈՒԻԱ ԱԿՈՒԻՏԱՆԱՅԻ կը համարուի թէ ծնած ըլլայ Կաթոնիայի Աւսէ քաղաքը: Ինք քոյրն է երեւելի Հուսփինոս Գլաւիոսի որ մեծն թէոքոսի օրով կայսրութեան մեծագոյն պաշտօնականն էր եւ բուզանդական Թագին տիրանալու ձգտումներուն ժամանակ էր որ սպանուեցաւ 395ին: Սիլուիա՝ ներկայ իր եղբօր մահուան՝ փութաց ամուսնուի որ սպանուեցաւ 395ին: Սիլուիա՝ ներկայ իր եղբօր մահուան՝ փութաց ամուսնուի որ սպանուեցաւ 395ին: Սիլուիա՝ ներկայ իր եղբօր մահուան՝ փութաց ամուսնուի որ սպանուեցաւ 395ին: Սիլուիա՝ ներկայ իր եղբօր մահուան՝ փութաց ամուսնուի որ սպանուեցաւ 395ին:

կ'երթան մեծ տաճարին մէջ զոր շինած է Կոստանդիանոս, և այդ տաճարը Գողգոթայի վրան է խաչելութեան ետեւ, և ամէն բան կը կատարուի ըստ սովորութեան, ինչպէս որ կ'ըլլուի ամենուրեք կիրակի օրը:

Արդարեւ հոս սովորութիւնը այնպէս է որ բոլոր քահանաներէն՝ որ հոն են, ուրոնք կ'ուզեն՝ կը քարոզեն, և անոնց ամէնքէն վերջ կը քարոզէ եպիսկոպոսն ինքը, և այս քարոզները անոր համար կ'ըլլուին միշտ կիրակի օրերը՝ որպէս զի ժողովուրդը միշտ հմտանայ Ս. Գրոց և Աստուծոյ սիրոյն. և երբ այս քարոզները կը կատարուին, մեծ սպասում կ'ըլլայ, որ պատարագ մատուցուի եկեղեցւոյ մէջ, և ատոր համար է որ չորրորդ կամ հինգերորդ ժամէն առաջ պատարագ կ'ըլլուի:

Բայց երբ պատարագը մատուցուած է եկեղեցւոյ մէջ ըստ սովորութեան, ինչպէս որ ամէն կողմ ալ կ'ըլլուի, այն ատեն մոնոգոնները երգերով մինչեւ Յարութիւն կը տանին եպիսկոպոսը: Երբ եպիսկոպոսը կը սկսի երթալ երգերով, կը բացուին Յարութեան բոլոր դռները, կը մտնէ ամբողջ ժողովուրդը, հաւատացեալ սակայն, իսկ երախաները՝ ոչ:

Եւ ուր որ կը մտնէ ժողովուրդը, կը մտնէ եպիսկոպոսը և իսկոյն կ'անցնի Վրկայարանի այրին դռներէն ներս: Նախ Աստուծոյ շնորհակալութիւն կը մատուցուի, և այսպէս աղօթք մը կ'ըլլուի ամէնուն համար. յետոյ կը ձայնէ սարկաւազը՝ որ ամէնքը գլուխին խոնարհեցնեն, կեցած տեղերնին, և այսպէս եպիսկոպոսը զանոնք կ'օրհնէ ներքին դռներէն ներս և յետոյ դուրս կ'ելլէ: Երբ դուրս կ'ելլէ եպիսկոպոսը, ամէնքը աջհամբոյրի կ'երթան:

Եւ այսպէս է որ պատարագը կ'երկարի մինչեւ հինգերորդ կամ վեցերորդ ժամ: Դարձեալ ճրագալոյցին ալ նոյնպէս կ'ըլլուի ըստ հանապազորդեան սովորութեան: Այս սովորութիւնն ուրեմն ամէն օր՝ կը պատահի ամբողջ տարուան շրջանին, բաց ի հանդիսաւոր օրերէն, յորս թէ ինչպէս կը կատարուի՝ ստորեւ նշանակեցինք:

Ամէնուն մէջ սակայն այս է զլիաւորապէս նշանակելի բանը զոր կ'ընեն, այսինքն թէ միշտ յարմար սաղմոսներ կամ կցուրդներ կ'ըսուին, թէ անոնք որ զիշերը կ'ըսուին, թէ անոնք որ առաւօտուն, և թէ անոնք որ օրուան մէջ վեցերորդ կամ իններորդ ժամուն կամ ճրագալոյցին, միշտ այնպէս յարմար և այնպէս բանաւոր որ իսկապէս կատարուածին համապատասխանեն:

Եւ որովհետեւ ամբողջ տարին կիրակի օրը մեծ եկեղեցին կ'երթան, այսինքն անոր մէջ որ Գողգոթայի վրայ է, այսինքն ետեւը խաչելութեան՝ զոր շինեց Կոստանդիանոս, մէկ կիրակի միայն, այսինքն Պենտեկոստէի յիսներեակին Սիոն կ'երթան, ինչպէս որ ստորեւ նշանակուած կը գտնէք, այնպէս սակայն ի Սիոն՝ որ երրորդ ժամէն առաջ հոն երթցուի, մատուցուի առաջին պատարագը մեծ եկեղեցւոյն մէջ:

(Թերր մը կը պակսի)

«Օրհնեալ որ գայ յանուն Տեառն» եւն. մնացածը: Եւ որովհետեւ մոնոգոնները հետի կ'երթան, կը ստիպուին դանդաղ բալել, անոր համար այն ժամուն Երուսաղէմ կը հասնին՝ երբ մարդ մարդու դէմքը կըրնայ զանազանել, այսինքն լուսածաղին մօտ, սակայն լոյսէն առաջ: Ուր երբ հասնին, իսկոյն այնպէս Յարութեան տաճարը կը մտնէ եպիսկոպոսը և ամէնքն անոր հետ, ուր ջահերը արտաքոյ կարգի կերպով կը փայլին: Ուրեմն հոն սաղմոս մը կ'ըսեն, աղօթք մը կ'ընեն, եպիսկոպոսէն կ'օրհնուին նախ երախաները, յետոյ հաւատացեալները:

Եպիսկոպոսը կը քաշուի, և իւրաքանչիւրն իր տունը կը դառնայ որ կերակուր ուտէ: Իսկ մոնոգոնները հոն են մինչեւ լոյս, և երգեր կ'երգեն: Ուր որ սակայն ժողովուրդը իր տունը կ'երթայ, երկրորդ ժամն սկսելուն ամէնքը կը ժողովուին մեծ եկեղեցին, որ Գողգոթայի վրան է: Թէ ինչ է զարդը այն օրուան Յարութեան կամ խաչի կամ Բեթղեհէմի եկեղեցւոյն, աւել

լորդ է գրել: Ուր ոսկիէն, ակունքներէն և մետաքսէն զատ ոչինչ կը տեսնես. վասն զի թէեւ քողեր տեսնես, ոսկեճամուկ և մետաքսանկար են, եթէ վարազոյրներ տեսնես՝ նոյնպէս ոսկեհիւս եւ մետաքսազարդ են: Պաշտօնէութիւնը՝ այն օր մէջտեղ կը հանէ ամէն տեսակ ոսկեղէն և ակնեղէն զարդեր: Իսկ թիւը կամ կշիւը մոմակալներուն կամ աշտանակներուն կամ լապտերներուն կամ ուրիշ պաշտաման համար միթէ կրնայ գնահատուիլ կամ գրուիլ: Վասն զի ինչ ըսեմ շէնքին զարդին մասին, զոր Կոստանդիանոս ինք իր մօր ներկայութեան, որքան որ կարողութիւն ունեցաւ թագաւորութեան՝ զարդարեց ոսկիով, խճանկարով, թանկագին մարմարով, թէ մեծ տաճարը և թէ Յարութիւնը կամ խաչը կամ Երուսաղէմի բոլոր սուրբ տեղերը:

Բայց որպէս զի մեր խնդրին դռնանք, ուրեմն առաջին օրը պատարագ կը մատուցուի մեծ եկեղեցւոյն մէջ՝ որ Գողգոթայի վրան է: Եւ որովհետեւ մինչ կը քարոզեն կամ կը կարդան մէն մի ընթերցուած կամ երգ կ'երգեն, ամէն բան պէտք է յարմար ըլլայ օրուան, յետոյ երբ եկեղեցւոյ պատարագը կ'աւարտի, կ'երթան Յարութեան տաճարը՝ ըստ սովորութեան, և այսպէս պատարագ կը մատուցուի զրեթէ վեցերորդ ժամուն:

Նոյն օրուան մէջ և ճրագալոյցին՝ ըստ հանապազորդեան սովորութեան կ'ըլլուի Յաջորդ օրն ալ նորէն կ'երթան Գողգոթայի տաճարը. նոյնպէս նաեւ երրորդ օրը: Երեք օր ուրեմն այս ուրախութիւնը կը տօնուի այն եկեղեցւոյն մէջ զոր շինեց Կոստանդիանոս: Չորրորդ օրը Եղէտնայի՝ մէջ, այսինքն այն եկեղեցւոյն մէջ որ Զիթենեաց լերան վրայ է, շատ գեղեցիկ, ուր և այնպէս կը տօնուի. հինգերորդ օրը ի Ղազարիոն, որ Երուսաղէմէն զրեթէ հազար հինգ հարիւր քայլ հեռու է, վեցերորդ օրը ի Սիոն, եօթներորդ՝ Յարութեան մէջ, ութերորդ օրը՝ խաչին:

Ուրեմն այսպէս ութ օր ամբողջ ուրա-

խութիւն, և այս շուքը կը կատարուի բոլոր սուրբ տեղերուն մէջ՝ զոր վերեւ յիշեցին:

Իսկ Բեթղեհէմի մէջ՝ ամբողջ ութ օր շարունակ նոյն հանդիսաւորութիւնն է, և նոյն ուրախութիւնը կը տօնուի քահանաներէն և տեղւոյն ամբողջ կղերէն և մոնոգոններէն՝ որոնք այդ տեղւոյն համար սահմանուած են: Վասն զի այն ժամէն երբ ամէնքը զիշերով Երուսաղէմ կը դառնան եպիսկոպոսին հետ, այն ատեն նոյն տեղւոյն միայնակեացները, ո՛վ ալ ըլլան, մինչեւ լոյս Բեթղեհէմի տաճարին մէջ կը հսկեն երգեր կամ կցուրդներ ըսելով, վասն զի հարկ է որ եպիսկոպոսն այդ օրերուն Երուսաղէմ մնայ: Իսկ նոյն օրերուն հանդէսին և ուրախութեան համար ունի հանդէսին և Երուսաղէմ կը ժողամբաւ բազմութիւն Երուսաղէմ կը ժողովուի ամէն կողմերէ, ոչ միայն մոնոգոններ, այլ նաեւ աշխարհական՝ այլ և կիններ, այլ նաեւ աշխարհական՝ այլ և կիններ:

Ի՞նչ. — Արդարեւ Յայտնութեան քահանաներեակները հոս շատ մեծ շքով կը տօնախմբուին: Վասն զի նոյն օրը թափօր ամենաթանկեղէն տաճարին մէջ, և կ'ընեն Յարութեան տաճարին մէջ, և ամէնքը մաս կ'առնեն, և ամէն ինչ իր ամէնքը կը կատարուի մեծ ուրախութեամբ՝ ինչպէս զատկին: Բոլոր քահանաները քաղաքէն կը գլխու տան, ինչպէս նաեւ եպիսկոպոսը, ըոգ կու տան, ինչպէս նաեւ եպիսկոպոսը, միշտ Աւետարանի նոյն (յարմար) կէտը պարզելով, երբ քահանաները օրը Յովսէփ և Մարիամ գթիսուս տաճար տարին և զԱնի տեսան՝ Սիմէոն և Աննա մարգարէութիւն՝ Փանուէլի դուստրը, և անոնց խօսքերը՝ զոր ըսին երբ գթիսուս տեսան, կամ նուէրը զոր ծնողքը նուիրեցին: Եւ յետ կարգաւ տօնախմբելու ամէնը, ինչպէս սովորութիւն է, Ս. Խորհուրդները տեղի կ'ունենան և այսպէս պատարագ կը մատուցուի:

Ի՞նչ. — Դարձեալ երբ զատկի օրերը կը հասնին, այսպէս կը տօնախմբուին: Վասն զի ինչպէս որ մեր քով քառասուն օր կը տօնուի, այսպէս կը տօնուի Զատիկէն առաջ, այսպէս պատարաստութիւնը Զատիկէն առաջ: Անոր համար սակայն ութ շաբաթ առաջ՝ Անոր համար սակայն ութ շաբաթ առաջ՝ Անոր հետեւ տէրունական (կիրակի) և շաբաթ օրերը ծոմ չեն բռներ,

բացառելով մէկ շաբաթ օր, երբ Ձատկի խթումն է (հսկում) և հարկ է ծոմ բռնել. այդ օրէն դուրս, ուրեմն, ամբողջ տարին գրեթէ ամենեւին շաբաթ օրը ծոմ չեն պահեր:

Եւ այսպէս ուրեմն ութը շաբաթէն հաշնելով ութը կիրակի և եօթը շաբաթ՝ վասն զի հարկ է մէկ շաբաթը ծոմ պահել, ինչպէս վերն ըսի, կը մնան քառասուն և մէկ օր որ ծոմ կը բռնուին, զոր հոս eortæ = էորթէ¹⁰ կը կոչեն, այսինքն քառասնորդը:

Իւրաքանչիւր շաբաթու իւրաքանչիւր օրն այնպէս կ'ընեն որ, այսինքն, կիրակի օրը, առաջին հաւաքութիւն եպիսկոպոսը Յարութեան տաճարին մէջ Աւետարանէն կարդայ Յիսուսի յարութեան մասը, ինչպէս որ ամբողջ տարին՝ կիրակի օրերը կ'ըլլուի¹¹, և նմանապէս մինչեւ առաւօտ կը կատարուի Յարութեան և խաչի տաճարներուն մէջ այն պաշտամունքը որ ամբողջ տարին կիրակի օրերուն մէջ կ'ըլլուի:

Յետոյ առաւօտը, ինչպէս նաեւ միշտ կիրակի օրը թափօր(?) կ'ըլլուի և կը կատարուին (այն պաշտամունքները) որոնք սովորութիւն են կիրակի օրերուն, մեծ տաճարին մէջ, որ Վկայարան կը կոչուի, որ Գողգոթայի վրայ կը գտնուի խաչին ետեւ:

Նոյնպէս տաճարին մէջ կատարուած պատարագէն վերջ երգերով Յարութեան տաճար կ'երթան, ինչպէս որ միշտ տէրունական օրերուն կ'ըլլուի:

Երբ ուրեմն այս բաները կը կատարուին, հինգերորդ ժամը կ'ըլլայ. հոս ձրազաւոյցը իր ժամուն կ'ըլլայ ինչպէս միշտ Յարութեան և խաչելութեան տաճարներուն մէջ, ինչպէս նաեւ իւրաքանչիւր սուրբ տեղերուն մէջ կ'ըլլուին. վասն զի կիրակի օրը իններորդ ժամուն կ'ըլլուի:

Դարձեալ երկուշաբթի նոյնպէս առաջին հաւաքութիւն կ'երթան Յարութեան տաճարը, ինչպէս և ամբողջ տարին, և մինչեւ առաւօտ կը կատարուին, միշտ կատարուածները: Դարձեալ երրորդ ժամուն կ'երթան Յարութեան տաճարը և կը կատարեն

(այն պաշտամունքը) որ ամբողջ տարին սուրբ ևն վեցերորդ ժամուն կատարուի, վասն զի քառասնորդաց օրերուն աս ալ կ'աւելցուի որ, երրորդ ժամուն ալ երթան: Դարձեալ վեցերորդ և իններորդ ժամուն և ձրազաւոյցին այնպէս կը կատարուին, ինչպէս որ սովորութիւն է միշտ ամբողջ տարին սուրբ տեղերուն մէջ:

Նմանապէս երեքշաբթի օրը ամէն ինչ երկուշաբթի օրուան պէս կը կատարուի: Իսկ չորեքշաբթի օրը նոյնպէս զիշերանց Յարութեան տաճարը կ'երթան և կը կատարեն ինչ որ միշտ՝ մինչեւ առաւօտ. իսկ իններորդին, որովհետեւ միշտ սովորութիւն է, այսինքն ամբողջ տարին, չորեքշաբթի և ուրբաթ իններորդ ժամուն Սիոն երթալ (թափօրապէս), որովհետեւ այս տեղերուն մէջ, բաց ի մարտիրոսաց օրերու հանդիպումէն (տօներէն), միշտ չորեքշաբթի և ուրբաթ օրերը ծոմ կը պահուի նաեւ երախաներէն. ուստի իններորդ ժամուն Սիոն կ'երթան: Վասն զի եթէ դէպքով քառասնորդաց մէջ մարտիրոսներու օրը (տօնը) հանդիպի չորեքշաբթի կամ ուրբաթ (որուն մէջ ոչ ոք ծոմ կը բռնէ, հետեւաբար և ոչ Սիոն կ'երթան իններորդ ժամուն):

Իսկ քառասնորդաց օրերուն մէջ, ինչպէս վերն ըսի, չորեքշաբթի իններորդ ժամուն Սիոն կ'երթան բոլոր տարւոյն սովորութեան համեմատ և ամէն ինչ կը կատարուի, ինչպէս սովորութիւն է իններորդ ժամուն, բաց ի պատարագէն:

Վասն զի եպիսկոպոս և քահանայ քարոզ կու տան որպէս զի ժողովուրդը Օրէնքը սորվի: Իսկ երբ պատարագը կը մատուցուի, և երբ ժողովուրդը երգերով Յարութեան տաճարը կը տանի եպիսկոպոսը, և անկից այնպէս կու գան որ, երբ Յարութեան տաճարը մտնեն՝ արդէն ձրազաւոյցի ժամը ըլլայ. այսպէս կ'երգեն երգեր և կցուրդներ, աղօթքներ կ'ընեն և ձրազաւոյցի պատարագ կը մատուցուի Յարութեան և խաչելութեան տաճարներուն մէջ: Բայց այդ օրերուն, այսինքն քառասնորդաց ձրազաւոյցի պատարագը

աւելի ուշ կը մատուցուի քան բոլոր տարւոյն ընթացքին: Իսկ հինգշաբթի ամէն ինչ կը կատարուի, ինչպէս երկուշաբթի և երեքշաբթի. իսկ ուրբաթ օրը ամէն ինչ կ'ըլլուի չորեքշաբթի օրուան պէս, և նմանապէս իններորդ ժամուն Սիոն կ'երթան և նոյնպէս անկից եպիսկոպոսը մինչեւ Յարութեան տաճարը կը բերեն երգերով:

Բայց Յարութեան տաճարին մէջ ուրբաթ օրուան հսկումը այն ժամէն կը կատարուի, երբ Սիոնէն կը դառնան երգերով, մինչեւ առաւօտ, այսինքն ձրազաւոյցի ժամէն՝ ըստ որում կը մտնեն յաջորդ օրուան առաւօտը, այսինքն շաբաթը:

Իսկ Յարութեան տաճարին մէջ մատաղ (?) կ'ըլլուի կանուխ, այնպէս որ պատարագը մատուցուի արեւմազէն առաջ: Եւ ամբողջ գիշերը փոխնիփոխ երբեմն հարց ու պատասխանով սաղմոսներ կ'ըսեն, որոնք ամէնը մինչեւ առաւօտ կը տեւեն: Իսկ պատարագը որ շաբաթ օրը Յարութեան մէջ կը մատուցուի՝ արեւազալէն առաջ է, այսինքն մատաղ (?), որպէս զի այն ժամուն որ արեւը կը յառաջէ, Ս. Յարութեան տաճարի պատարագն աւարտած ըլլայ:

Այսպէս կը կատարուին ուրեմն քառասնորդաց իւրաքանչիւր եօթնականները:

Ըսելս թէ շաբաթ օրը կանուխ կը մատուցուի պատարագը, այսինքն արեւազալէն առաջ, անոր համար է որ շուտով լուծեն (ծոմը) անոնք՝ զորս այստեղ շաբաթապահ կը կոչեն: Վասն զի հոս քառասնորդաց մէջ այնպէս է սովորութիւնը ծոմերուն, որ, անոնք՝ զորս շաբաթապահ կը կոչեն, այսինքն անոնք որ շաբաթն (ամբողջ) կը պահեն, անոր համար հինգերորդ ժամուն կը մատուցուի պատարագը որպէս զի կարենան կիրակի օրն ուտել: Եւ կիրակի օրն ուտելէ վերջ այլեւս չեն ուտեր մինչեւ շաբաթ առաւօտ, զի ոչ ոք հաղորդուած Յարութեան տաճարին մէջ: Ուրեմն անոնց համար, որպէս զի շուտով լուծեն, շաբաթ օրն արեւազալէն առաջ կը մատուցուի պատարագը Յարութեան տաճարին մէջ:

Իսկ ըսելս թէ պատարագն իրենց համար կը մատուցուի առաւօտը, ըսել չէ թէ միայն իրենք կը հաղորդուին, այլ ամէնքը կը հաղորդուին անոնք որ չեն ուզեր նոյն օրն Յարութեան տաճարին մէջ հաղորդուիլ:

Ի՞նչ. — Հոս ծոմերու սովորութիւնն այնպէս է որ, քառասնորդաց մէջ, ինչպէս ուրիշներ որ կերակուր կերած են կիրակի պատարագէն վերջ, այսինքն հինգերորդ կամ վեցերորդ ժամուն, այլեւս չեն ուտեր ամբողջ եօթնականը մինչեւ շաբաթ օրը՝ Յարութեան տաճարին պատարագէն վերջ, և ասոնք են շաբաթապահները (եօթնակ մը): Իսկ երբ շաբաթ առաւօտ ուտեն, այլեւս իրիկունը չեն ուտեր, այլ միւս օրը, այսինքն կիրակի, կը ճաշեն եկեղեցւոյ պատարագէն վերջ հինգերորդ ժամուն կամ քիչ մ'աւելի ուշ և յետոյ այլեւս չեն ուտեր մինչեւ շաբաթ, ինչպէս վերն ըսի:

Վասն զի հոս այնպէս է սովորութիւնը որ, ամէնքը որ ափոքարքիր են¹², ինչպէս հոս կ'ըսեն, այլ կամ կին, ոչ միայն քառասնորդաց մէջ այլ նաեւ ամբողջ տարին՝ օրը մէկ անգամ կ'ուտեն: Իսկ եթէ այն որ ափոքարքիրներէն են որ չեն կրնար ծոմ պահել ամբողջական շաբաթներ, ինչպէս վերն ըսինք, ամբողջ քառասնորդաց մէջ վերն ըսինք, ամբողջ քառասնորդաց մէջ հինգշաբթի օրերը կը ճաշեն: Իսկ անիկա որ ատոր ալ անկարող է, երկօրեայ կը պահէ ամբողջ քառասնորդաց շրջանին. իսկ անոնք որ և ոչ զայդ կրնան, իրիկունէ իրիկուն կ'ուտեն:

Բայց ոչ ոք կը պահանջէ թէ որքան պէտք է պահէ, այլ իւրաքանչիւր որ այնքան կը պահէ որքան կարող է. և ոչ կը գովուի ան որ շատ պահած է, և ոչ կ'անարգուի ան՝ որ նուազ: Հոս այս է սովորութիւնը:

Իսկ քառասնորդաց մէջ անոնց կերակուրն աս է որ՝ ոչ հաց... զոր ճաշակել կարելի չէ, և ոչ ձէթ կ'ուտեն և ոչ մէկ բան որ ծառի պտուղ է, այլ միայն ջուր և ապուր մը՝ քիչ մը ալիւրի խիւսով:

Քառասնորդաց ուրեմն ծոմապահութիւնը այսպէս կ'ըլլայ, ինչպէս ըսինք:

կը կատարուի երկուշարթի օրուան պէս. իսկ երեքշարթի այս միայն կ'աւելցուի որ, ուշ գիշերին՝ յետ մատուցանելու պատարագը վկայարանին մէջ և երթալու Յարութեան տաճարը և դարձեալ Յարութեան տաճարին մէջ պատարագ մատուցանելու, գիշերուան այն ժամուն ամէնքը այն եկեղեցին կ'երթան՝ որ Եղէնայի (Զիթենեաց) լերան վրան է:

Եւ երբ այդ եկեղեցին հասնին, եպիսկոպոսը այրին մէջ կը մտնէ, ուր սովոր էր Տէրը սորվեցնել աշակերտներուն, և կ'առնէ Աւետարանի մատենը և ոտքի կեցած ինք եպիսկոպոսը կը կարդայ Յիսուսի այն խօսքերը որ գրուած են Մատթէոսի աւետարանին մէջ, այսինքն ուր որ կ'ըսէ. «Զգոյշ եղէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ»: Եւ եպիսկոպոսը կը կարդայ այդ ամբողջ բանախօսութիւնը: Եւ ուր որ այդ ընթերցումն ըրաւ, հոն աղօթք կ'ըլլուի, կ'օրհնուին երախաները, յետոյ հաւատացեալները, պատարագ կը մատուցուի և իւրաքանչիւրը այդ ուշ գիշերին լեռնէն իր տունը կը դառնայ:

ԼԳ. — Դարձեալ չորեքշարթի օրը, առաջին հաւախօսէն սկսեալ ամէն ինչ կ'ըլլուի բոլոր օրը, ինչպէս երկուշարթի և երեքշարթ օրը, բայց երբ գիշերուան պատարագը կ'աւարտի վկայարանին մէջ և եպիսկոպոսը Յարութեան տաճար կը տարուի, իսկոյն կը մտնէ այրը՝ որ Յարութեան տաճարին մէջ է, և կը կենայ դռներէն ներս. իսկ երէցը կը կենայ դրան դիմաց և կ'առնէ Աւետարանն և կը կարդայ այնտեղը, ուր Յուդա Սկարիփտացին հրեաներուն գնաց, սահմանեց թէ ինչ պիտի տային իրեն որ մատնէր Տէրը: Եւ երբ այդ տեղը կը կարդացուի, ամբողջ ժողովուրդը այնքան կը հեծէ և կը հառաչէ որ, մէկը չի մնար այդ ժամուն որ չարտասուէ: Յետոյ աղօթք կ'ըլլուի, կ'օրհնուին երախաները, յետոյ հաւատացեալները և պատարագ կը մատուցուի:

Լ. — Հինգերորդ օրը առաջին հաւախօսէն Յարութեան մէջ կը կատարուին այն ամէնքը որ սովորութիւն է. նոյնպէս

երրորդ և վեցերորդ ժամերուն: Իսկ ութերորդ ժամուն՝ բոլոր ժողովուրդը ըստ սովորութեան վկայարան կը հաւաքուի, բայց աւելի կանուխ քան միւս օրերը, որովհետեւ հարկ է շուտով պատարագ մատուցանել: Ուստի ժողովուրդեան հաւաքուելէն վերջ կատարուելիքները կը կատարեն. նոյն օրը մատաղ (?) կ'ըլլայ վկայարանին մէջ, և հոն պատարագ կը մատուցուի գրեթէ տասներորդ ժամուն: Բայց պատարագէն առաջ սարկաւագապետը կը ձայնէ և կ'ըսէ. «Գիշերուան առաջին ժամուն ամէնքս ժողովուրդն Եղէնայի տաճարին մէջ, վասն զի մեծ աշխատութիւն կայ մեզի համար այս գիշեր»:

Երբ ուրեմն վկայարանի մէջ կ'աւարտի պատարագը, խաչին կու գան, հոն մէկ երգ կ'երգեն, աղօթք մը կ'ըլլուի, և եպիսկոպոսը պատարագ կ'ընէ, ամէնքը կը հաղորդուին: Վասն զի այդ միակ օրէն զատ ամբողջ տարին բնաւ պատարագ չի մատուցուիր խաչին մէջ, այլ միայն այն օրը:

Հոտ ալ ուրեմն պատարագն աւարտուելէն վերջ՝ Յարութիւն կ'երթան, աղօթք կ'ընեն, ըստ սովորութեան կ'օրհնուին երախաներն և հաւատացեալները, և պատարագ կը մատուցուի: Եւ այսպէս իւրաքանչիւր ոք կը փութայ իր տունը դառնալ որպէս զի կերակուր ուտէ. վասն զի հազիւ կերակուրն աւարտած, ամէնքը Եղէնա կ'երթան, այն եկեղեցին՝ ուր այր մը կայ, որուն մէջ կեցաւ Տէրն առաքելոց հետ՝ այդ օրը: Եւ հոն գրեթէ մինչեւ գիշերուան հինգերորդ ժամը՝ միշտ երգեր կամ կցուրդներ կ'երգուին օրուան և տեղւոյն յարմար, ինչպէս նաեւ ընթերցումներ կ'ըլլան. միջանկեալ աղօթքներ կ'ըլլուին. և Աւետարանէն ալ կը կարդացուին այն տեղերը՝ ուր Տէրը խօսած է աշակերտներուն նոյն օրը նոյն այրին մէջ՝ որ նոյն եկեղեցւոյն մէջ է: Ուսկից գրեթէ գիշերուան վեցերորդ ժամուն երգերով կ'ելլեն վեր իմբոմոն, այնտեղ ուսկից Տէրը երկինք համբարձաւ: Եւ հոն ալ նորէն նոյնպէս օրուան յարմար երգեր և կցուրդներ

կ'երգուին. և բոլոր աղօթքներն ալ կ'ըլլուին, զոր եպիսկոպոսը կ'ըսէ՝ միշտ օրուան և տեղւոյն յարմար:

ԼԶ. — Եւ այսպէս ուրեմն երբ հաւախօսը կը սկսի, իմբոմոնէն վար կ'իջնեն երգերով, և կ'երթան հոն՝ ուր Տէրը աղօթեց, ինչպէս գրուած է Աւետարանին մէջ. «Եւ նա մեկնեցաւ քարընկեցի մը չափ և կ'աղօթէր»¹⁷ եւն.։ Հոն գեղեցիկ տաճար մը կայ, ուր կը մտնէ եպիսկոպոսն և ամբողջ ժողովուրդը, հոն՝ օրուան և տեղւոյն յարմար աղօթք մը կ'ընեն, յարմար երգ մը կ'երգեն և Աւետարանէն կը կարդան այն տեղը՝ ուր ըսաւ իր աշակերտներուն «Արթուն կեցէք, հսկեցէք որ փորձութեան մէջ չ'իյնաք»¹⁸: Եւ ամբողջ այդ տեղը (ընթերցուածը) կը կարդացուի և նորէն աղօթք կ'ըլլուի:

Եւ անկից երգերով Գեթսեմանի կ'իջնեն եպիսկոպոսին հետ հետի՝ մինչեւ փոքրիկ տղաքն անգամ, ուր սակայն ժողովուրդեան այնքան խուռն բազմութեան և հանապազորդ հսկումներէն յոգնած և ծոմապահուած թիւններէն տկարացած ըլլալուն պատճառ՝ որովհետեւ այնքան բարձր լեռնէ վար պիտի իջնեն՝ կամաց կամաց Գեթսեմանի՝ կ'երթան երգերով:

Եկեղեցական լապտերները պատրաստուած են երկու հարիւր՝ ամբողջ ժողովուրդեան լոյս ընելու համար:

Արդ երբ Գեթսեմանի կը հասնին, նախ յարմար աղօթք մը կ'ընեն, յետոյ երգ մը կ'երգեն. ապա Աւետարանէն կը կարդան այն տեղը ուր Տէրը բռնուեցաւ:

Եւ երբ այդ ընթերցուածը կը կարդան, ժողովուրդն այնքան կը հառաչէ և կը հեծէ լալով որ՝ գրեթէ մինչեւ քաղաքը կը լսուի ժողովուրդեան հեծեմանը:

Եւ արդէն այն ժամէն սկսեալ հետի քաղաք կ'երթան երգերով, կը հասնին դուռը այն ժամուն՝ երբ կը սկսին մարդուկ գիրար ճանչնալ. անկից ամէնքը, զիկ գիրար ճանչնալ. անկից ամէնքը, առանց բացառութեան, քաղաքին մէջ կը մնան պատրաստ, մեծ ու փոքրիկ, հառաչող և աղբատ, և յատկապէս այդ օրը ոչ ոք ետ կը կենայ ծոմէն մինչեւ առա-

ւօտ: Այսպէս՝ եպիսկոպոսը Գեթսեմանիէն մինչեւ դուռը կը տարուի, և անկից ամբողջ քաղաքին մէջէն մինչեւ խաչելու թիւն: Իսկ երբ խաչելութեան (տաճարին) դիմաց հասնին, արդէն գրեթէ լուսած կ'ըլլայ: Հոն նորէն Աւետարանէն կը կարդացուի այն տեղը ուր Տէրը Պիղատոսի կը տարուի, և կը կարդացուի բոլորը՝ ինչ որ գրուած է թէ Պիղատոս ըսած է Տիրոջ կամ հրեաներուն:

Յետոյ եպիսկոպոսը կը խօսի ժողովուրդեան՝ զանոնք սփոփելով, որովհետեւ ամբողջ գիշերն յոգնեցան և դեռ նոյն օրն ալ պիտի յոգնին, որպէս զի չթուշնան, այլ յուսան Աստուծոյ վրայ, որ այդ յոգնութեան փոխարէն մեծ վարձք պիտի հատուցանէ իրենց:

Եւ յետ այսպէս զանոնք սփոփելու, որքան որ կարելի է, անոնք կը խօսի և կ'ըսէ. «Առ այժմ ամէնքդ ալ ձեր տուները գացէք, քիչ մը հոն մնացէք, եւ օրուան երկրորդ ժամուն մօտ ամէնքդ պատրաստ եղէք հոս, որպէս զի այն ժամէն մինչեւ վեցերորդ ժամ կարենանք տեսնել այն խաչափայտը, հաւատալով իւրաքանչիւրինի թէ՛ ան պիտի նպաստէ ձեր փրկութեան համար: Վասն զի սկսեալ վեցերորդ ժամէն հարկ է որ ամէնքս այս տեղ ժողովուրդն, այսինքն խաչելութեան առջեւ, որպէս զի մինչեւ գիշեր ընթերցուածներ ու աղօթքներ կատարենք»:

Ի՛նչ. — Ատկէ վերջ, երբ խաչելութեան պատարագն աւարտած է, այսինքն արեւագալէն առաջ, իսկոյն ամէն ոք կարօտով կ'երթայ Սիոն աղօթելու այն սեանքով՝ որուն (կապուած) ձաղկուեցաւ Տէրը: Անկից կը դառնան, քիչ մը կը կենան իրենց տուները և իսկոյն կը պատրաստուին: Եւ յետոյ աթոռ կը դրուի եպիսկոպոսին համար Գողգոթայի վրայ խաչելութեան ետեւ, որ ցարդ կայ. եպիսկոպոսը կը բազմի աթոռին վրայ. իր առջեւ կը դրուի սեղան մը վրան կտաւով ծածկուած. սեղանին շուրջը կը բռնեն սարկաւագները և կը բերեն արծաթ ոսկեջուր արկղ մը՝ որուն մէջ է սուրբ խաչափայտը,

կը բանան և կը հանեն, կը դնեն սեղա-
նին վրայ թէ՛ խաչը և թէ՛ տախտակը²⁰ :

Արդ երբ սեղանին վրայ կը դրուի, ե-
պիսկոպոսը ձեռքերով կը բռնէ սուրբ
փայտին երկու ծայրերէն, իսկ սարկա-
ւագները որ հոն շուրջը կեցած են՝ կը
պաշտպանեն: Եւ անոր համար այդպէս
պաշտպանութիւն կ'ըլլուի, որովհետեւ
սովորութիւն է որ մի առ մի գայ ամբողջ
ժողովուրդը՝ թէ՛ հաւատացեալ, թէ՛ երա-
խայ, խոնարհի սեղանին, համբուրէ սուրբ
փայտը, և անցնի երթայ: Որովհետեւ չեմ
գիտեր երբ, կը պատմեն թէ մէկը խածեր
և գողցեր է սուրբ փայտէն, անոր համար
հիմա չորս կողմը կեցած սարկաւագներէն
այդպէս կը պահպանուի որպէսզի մէկը
չգայ և համարձակի նորէն այնպէս ընել:

Այսպէս ուրեմն ամբողջ ժողովուրդը մէ-
կիկ մէկիկ կ'անցնի, ամէնքը կը խոնար-
հին, նախ ճակատին և յետոյ աչքերնուն
դպցնելով խաչն և տախտակը և յետոյ
համբուրելով²¹ խաչը կ'անցնին, բայց ոչ
ոք ձեռքը կ'երկնցնէ դպչելու:

Խաչն համբուրելէն վերջ երբ անդին
կ'անցնին, հոն կեցած կ'ըլլայ սարկաւագ
մը, որ բռնած է Սողոմոնի մատանին և
այն եղջիւրը²² որով թագաւորները կ'օ-
ծուէին:

Կը համբուրեն նաեւ եղջիւրը, կը սպա-
սեն և մատանին նուազ երկրորդ
. մինչեւ վեցերորդ ժամը ամբողջ
ժողովուրդը կ'անցնի, մէկ դռնէն մտնե-
լով, միւսէն ելլելով, որովհետեւ այս բանն
հոն կ'ըլլուի, ուր որ նախորդ օրը, այս-
ինքն հինգշաբթի օրը պատարագ մատու-
ցուեցաւ:

Եւ երբ վեցերորդ ժամը կը հասնի,
կ'երթան խաչելութեան (տաճարին) առջեւ,
ըլլայ անձրեւին, ըլլայ տաքին, որովհե-
տեւ այդ տեղը կամարակապ է, այսինքն
իրբեւ մեծ և գեղեցիկ գաւիթ մը, որ խա-
չելութեան և Յարութեան (տաճարներուն)
միջեւ կը գտնուի: Ուրեմն հոն է որ կը
հաւաքուի ամբողջ ժողովուրդը, այնպէս
որ այլեւս կարելի չէ բանալ (մէջերնին
մտնել):

Իսկ եպիսկոպոսին աթոռ կը դրուի
խաչելութեան առջեւ, եւ վեցերորդէն
մինչեւ իններորդ ժամ ուրիշ բան չեն
ընեն եթէ ոչ ընթերցուածներ²³ կը կար-
դան այսպէս. այսինքն նախ սաղմոսները՝
որոնց մէջ չարչարանաց վրայ կը խօ-
սուի. կը կարդան նաեւ առաքեալէն (Պօ-
ղոսէն?) թէ՛ առաքելոց թուղթերէն և թէ՛
Գործերէն ուր որ Տիրոջ չարչարանքին
վրայ կը խօսին. ինչպէս նաեւ աւետա-
րաններէն կը կարդան այն տեղերը ուր
կը չարչարուի. յետոյ կը կարդան մար-
գարէներէն՝ ուր որ կը պատմեն թէ Տէրը
պիտի չարչարուի. յետոյ կը կարդան այն
աւետարաններէն՝ ուր որ չարչարանքը կը
պատմեն:

Եւ այսպէս վեցերորդէն մինչեւ իննե-
րորդ ժամ այնպէս կը կարդան ընթեր-
ցուածները կամ երգեր կ'երգեն, որպէս
զի ամբողջ ժողովուրդեան ցուցնեն թէ՛ ինչ
որ մարգարէները գուշակեցին Տիրոջ չար-
չարանքի մասին՝ թէ՛ աւետարաններով և
թէ՛ առաքեալներուն զրուածներով ցուցնեն
թէ՛ կատարուած են:

Եւ այսպէս այն երեք ժամերու ընթաց-
քին ամբողջ ժողովուրդեան կ'ուսուցանեն
թէ՛ բան մը չէ եղած որ կանխագուշակ-
ուած չըլլայ, և բան մը չէ ըսուած որ
ամբողջապէս կատարուած չըլլայ:

Սակայն միշտ կ'ընդմիջեն աղօթքներ,
որոնք օրուան յարմար են:

Իսկ իւրաքանչիւր ընթերցուածի և ա-
ղօթքի՝ ժողովուրդն այնքան կը գորովի և
այնքան կը հեծեծէ որ կը զարմանաւ
վասն զի մէկը չի մնար որ, ոչ մեծ և
ոչ փոքրիկ, որ այն օրը, այն երեք ժա-
մերուն այնքան չլայ, որքան որ կարելի
չէ երեւակայել, Տիրոջ մեզի համար այդ
չարչարանքները կրած ըլլալուն համար:

Առկէ վերջ, երբ իններորդ ժամը կը
սկսի, Յովհաննու աւետարանէն այն տեղը
կը կարդան ուր հոգին աւանդեց. և այդ
ընթերցուածէն վերջ աղօթք կ'ըլլուի և
պատարագ:

Եւ երբ խաչելութեան առջեւ պատա-
րագն աւարտի, իսկոյն ամէնքը կ'երթան

մեծ տաճարն ի վկայարան և հոն կը կա-
տարուի այն ամէնը որ սովորութիւն է
կատարել մինչեւ իրիկուն նոյն եօթնեա-
կին մէջ՝ վկայարանի մէջ հաւաքուած
ատեն: Պատարագն աւարտելէն վերջ՝ Յա-
րութեան տաճարը կ'երթան: Եւ երբ հոն
հասնին, աւետարանէն կը կարդան այն
տեղը ուր Յովսէփ Պիղատոսէն կը խնդրէ
Տիրոջ մարմինը և զայն կը դնէ նոր գե-
րեզմանի մէջ: Այդ ընթերցումէն վերջ ալ
աղօթք մը կ'ըլլուի, կ'օրհնուին երախա-
ները, և յետոյ պատարագ կը մատուցուի:

Բայց այդ օրուան մէջ չեն ձայներ (ազդ
չ'ըլլուիր) հսկելու համար Յարութեան

տաճարին մէջ, որովհետեւ գիտեն որ ժո-
ղովուրդն յոգնած է. բայց սովորութիւն
կայ որ հոն հսկեն: Եւ այսպէս ժողովուր-
դեան մէջէն ով որ կ'ուզէ, մանաւանդ թէ
որոնք որ կրնան՝ կը հսկեն. իսկ անոնք որ
չեն կրնար, չեն հսկեր հոն մինչեւ առաւօտ.
Բայց ժառանգաւորները կը հսկեն հոն,
այսինքն անոնք որ զօրաւոր են կամ ե-
րիտասարդ. և ամբողջ գիշերը երգեր
կ'երգեն և կցուրդներ մինչեւ առաւօտ:

Բայց մեծ ամբողջ մը հսկում կը կա-
տարէ, ոմանք իրիկունը, ուրիշներ կէս
գիշերին, որքան որ կրնան:

1. Բնագիրը՝ monazontes (= μονάζον) հմտ.
նախնեաց մոնազն, մոնազոն, մոնոզոն ձեւերը:
2. Բն. parthene (α) աղաւաղութիւն յն. παρθέ-
νος = կոյս:
3. Տուն մը սաղմոս՝ օրուան յիշատակին վերաբե-
րեալ՝ ուրիշ սաղմոսի մը սկիզբը. բն. antiphona
(= ἀντίφωνον). Թէեւ երբեմն՝ յաւելուածի իմաստ
ունի, երբեմն ալ դասէ գաս փոխիփոխ սաղմոսաւ-
ցութեան:
4. Հիները՝ օրը (ցերեկ, տիւ) 12 ժամերու կը բաժ-
նէին. Առաջին ժամը՝ այժմեան մեր գործածածին 7ը,
առաւօտ. 12ը ժամը կ'ըլլայ երեկոյեան եօթը. Որով
6ը ժամը՝ կէսօրն է. իսկ զիշերը (ցայ) կը բաժնէին
չորս պարբերու (հսկում) = vigilia = φυλακή. մէն մի
պահը բաղկացած է երեք ժամէ. Ա. պահը արեւմուտ-
պահը բաղկացած է երեք ժամէ. Բ. պահը արեւել-
քին կը սկսէր. Բ. մեր ժամով՝ 9-12 կը կոչուէր կէս
գիշեր. Գ. կը կոչուէր ճաշի ժամը = ἀλεξτροφω-
νία = galli cantus. Իսկ մեր բն. կը գործածէ միշտ
pullorum cantus, մեր ժամով 12-3, իսկ Գ. պահը՝
3-6, այսինքն մինչեւ առաւօտ:
5. Licinicon = յն. λυχνικόν, զոր հեղինակը կը
Թարգմանէ լատիներէն՝ lucernare. Τὸ λυχνικόν
համազօր է երեկոյեան ժամերգութեան՝ որ ճրագ-
ներու լոյսով կը կատարուէր = ἄρωματις, զոր
հեղինակը կը Թարգմանէ՝ Miserere, Domine = Տէր,
ողորմեա՛ւ:
6. Բն. Kyrie, eleison = Κύριε, ἐλέησον, զոր
հեղինակը կը Թարգմանէ՝ Miserere, Domine = Տէր,
ողորմեա՛ւ:
7. Այսինքն օրուան տօնին, յիշատակին կամ խոր-
հուրդին մասին խօսող կամ անոր յարմար:
8. Բն. musivo (um).
9. Բն. Eleona = յն. Ἐλεών. Ժիթնի:
10. Eortae հաւանօրէն ἐορταί բառէն՝ որ կը նշա-
նակէ տօն:

11. Հայ ծէսին մէջ ցարդ մօէն կիրակի, անխափան
կը կատարուի այդ արարողութիւնը, այսինքն իւղաբե-
րից կարգը՝ երգերով և Աւետարանով:
12. Ըստ «Thesaurus linguae latinae» բառա-
բանին (տպ. Lipsiae, 1900-1906) հաւանօրէն ծագած
է ἀπὸ τακτός է, որ կրօնական համախմբումի մը և կամ
աղանդի մը անուն կը թուի, քանի որ ճիշտ այդ ա-
նունը կրօնած է ուրիշ աղանդաւորներու շարքին «Eu-
nomiani, Ariani et Aputactitae nullis circulis
coeant». Cod. Theod.
13. Բն. Lazarium, այսինքն՝ Ղազարաւան, ուր է
ըստ աւանդութեան Ս. Ղազարի գերեզմանը՝ ուսկից
աւանն իր անունն է առած. և այսօր ալ դեռ ան կը
կոչուի El-Azariéh = Ղազարի գիւղ:
14. Ղազարու յարութեան օրը:
15. Martyrium = μαρτυρίων. Այսինքն՝ այն տա-
ճարները որ սուրբերու նահատակութեան տեղոյն վրայ
շինուած էին:
16. Matrone (α)... domini, այսինքն ագնուական-
ներ:
17. Ղուկ. ԻԲ. 41.
18. Մարկ. ԺԳ. 38.
19. Բն. միշտ Gessamani կը դնէ փոխանակ Gethse-
mani:
20. Բն. Titulus = տիտղոս:
21. Ինչպէս սովորութիւն է արեւելեցիներու մօտ՝
նախ ճակատ ու աչք դպցնել, յետոյ համբուրել, ձեռք,
պաշտամունքի առաքիայ, եւն.:
22. Այն եղջիւրը՝ որուն մէջ թագաւորներու օծման
իւղ կար, ինչպէս կը տեսնենք թագաւորութեանց զբո-
րներուն մէջ:
23. Ինչպէս ցարդ սովորութիւն է: